

**ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿՐ ՊԱՏԱՐԱԳԷ ԵՒ ԿՐ ՔԱՐՈՁԷ  
ՌԻՏԼԻԻ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ  
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ**

Կիրակի, Յուլիս 18, 2010ին, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեան հովուական այցելութիւն շնորհեց Ռիտլիի (Ֆրէզնոյի շրջան) Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ եւ Կիրակի, Յուլիս 18ին Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց: Սուրբ Սեղանին սպասարկեցին Արժ. Տ. Շահէ Աւագ Քհնյ. Ալթունեան եւ Արժ. Տ. Գէորգ Աւագ Քհնյ. Առաքելեան:

Վերոյիշեալ այս երկու Հոգեւոր Հայրերը ամիսը երկու անգամ փոխն ի փոխ Սուրբ Պատարագ կը մատուցանեն եւ կը քարոզեն այս եկեղեցւոյ մէջ:

Սուրբ Պատարագի անարտին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ապա Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Ծխական Խորհուրդին հետ: Այնուհետեւ Մատերա մեկնելով այցելեց Արժ. Տ. Արթուն Աւագ Քհնյ. Սմբատեանին: Տէր Հօր Քահանայական Ձեռնադրութեան 60ամեակին առթիւ, Առաջնորդ Սրբազան Հօր խնդրանքին ընդառաջելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը այս տարուան Մայիսի սկիզբը Օրինութեան եւ Գնահատանքի Գիր դրկած էր Արժ. Տ. Արթուն Աւագ Քհնյ. Սմբատեանին: